ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հուլիսի 2011 թվականի թիվ 75-Ա

ԽԱՉԱՏՈՒՐ ՀԱՄԶՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <ՈՍԿԵՎԱՆԻ ԳԲԱ>, <ԿՈԹԻԻ ԳԲԱ>, <ՀԱՂԱՐԾՆԻ ԱԱՊԿ> ՓԲԸ ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. մայիսի 19-ի <50 տոկոս պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների վերստուգող հանձնաժողովների /վերստուգողների/ ձևավորումը և գործունեությունը կանոնակարգելու մասին> թիվ 1187-Ն որոշման 2-րդ կետի <գ> և <ե> ենթակետերով, 56-րդ կետով, հիմք ունենալով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2006թ. մայիսի 3-ի թիվ 478-Ն հրամանի 52-րդ կետը և 53-րդ կետի <ա> ենթակետը և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության <50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների վերստուգող հանձնաժողովների /վերստուգողների/ ընտրության մրցութային հանձնաժողովի > 2011թ. հուլիսի 19-ի թիվ 2 որոշումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Խաչատուր Միշայի Համզյանին 2011թ. հուլիսի 20-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության < Ոսկեվանի գյուղական բժշկական ամբուլատորիա>, <Կոթիի գյուղական բժշկական ամբուլատորիա>, <Հաղարծնի առողջության առաջնային պահպանման կենտրոն> փակ բաժնետիրական ընկերություններում վերստուգող՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր երեք տարի ժամկետով:
2. Խաչատուր Միշայի Համզյանի վարձատրության չափը սահմանել < Ոսկեվանի գյուղական բժշկական ամբուլատորիա>, <Կոթիի գյուղական բժշկական ամբուլատորիա>, <Հաղարծնի առողջության առաջնային պահպանման կենտրոն> փակ բաժնետիրական ընկերություններից յուրաքանչյուրում նվազագույն աշխատավարձի չափով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2011թ. հուլիսի 20
ք. Իջևան